

ԲԱԺԱՆՈՐՂ ԱՐՈՒԹԻՒՆ
 Պոչկարիոյ համար
 Տարեկան 10 ձր.
 Վեցամսեայ 5 »
 Արտասահմանի հա-
 մար տարեկան 12 »
 Վեցամսեայ 6 »
 ԿԱՆԻՅԻԿ ՎՃԱՐՆԵԼԻ
 —(—
 Գրութիւնք եւ չեմ տրուի
 —(—
 Իրանացեան տոյր 20 սան-
 դիւն հ. երեկեմ առիւտ սն-
 զամենու համար 20 Օլո
 գեղջ կրչայ :

ՇԱՐՇՈՒՄ

Նախկէ զրաւ զրկել
 Խմբագրութեան հասցիին

R. P. Kalémkarian
 (Autriche)
 Medicinisch-chirurgische
 W. 4
 Vienna

ТІЯ НА ВЪСТНИКЪ
 «Шаржумъ»
 Варна.

Redaction du journal
 «Charjoun»
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԿՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔԸ ԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՇՈՒՄ ՕՐԵՐԸ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

ՊԵՏԷ Ե ԶՐԱԺԱՐՎԵԼ

Մենք երկար ու ձիգ դարեր
 ապրել ենք իբր սարուկ, միշտ
 ուրիշի հրամանի տակ, օտար ճշն-
 շույի քմահաճոյքներին համա-
 ձայն եւ, այդ պատճառով էլ ըն-
 դունել ենք բոլոր այն վաս-
 յառկութիւնները, առանց որոնց
 ստրուկը չէ կարող ապրել իրան
 մէջը շարունակ լախտով տիրող
 հետ։ Մենք սովորել ենք քրժ-
 նել, լիզել մեզ հարածող ձեռ-
 քը, ճնշել մեզին թոյլին, սուտ
 խօսել, կեղծել որպէսզի մեզին
 զօրեղը, մեզ հարածողը գոնէ եր-
 բնմն մեզ քաղցր աչքով նայի, եւ
 մենք կարողանանք քարշ տալ
 մեր կեանքը։

Այս գրգռելի յատկութիւնները
 մեր մէջ միտ ու արիւն են դար-
 ձել գրեթէ բնածին յատկութիւն-
 ների վերածվել։

Մինչեւ վերջին տարիները
 այդ բոլորը մեզ համար շատ բը-
 նական էր երեւում, նոյն իսկ
 սիրելի, ազգային յատկութիւն-
 ներ։ Բայց երբ սկսեցինք շքե-
 վելուստոր մարդկութեան հետ,
 ըմբռնել որ իսկական մարդը
 շատ բարձր մի էակ է, մեր մէջ
 առաջացաւ մի նոր, թարմ ասե-
 լի մաքուր հայ տարր, որը սար-
 սափելով նկատեց թէ հայ մո-
 ղովորը հասել է բարոյական
 անկման ծայրահեղ աստիճանին,
 եւ թէ այդպէս շարունակվի,
 պետք է բոլորովին ապաստելի,
 ոչնչանայ։

Զգալով չը բաւականացաւ այդ
 տարրը, նա որոշեց հիմնական
 միջոցներ գիծել մահամերձ ժո-
 ղովորին փրկելու մահաւան ճի-
 րաններէն։ Սկսվեց կռիւը հնի
 եւ նորի, խաւարի եւ լոյսի մէջ։
 Մաքուր հայ տարրը իր գիմա-
 ցը ունէր գրեթէ հայ ամբողջ
 ժողովուրդը, որի հոգու եւ սրտի
 վրայ իշխում էր սպէտ, խելա-
 ջուրկ եւ անբարոյական հայ կղե-
 վըրը եւ ազան, ժողովուրդը որանց
 հլու ծառան էր, որովհետեւ հո-
 գու եւ կեանքի փրկութիւնը սրան-
 ցից էր սպասում։

Վերանորոգման կռիւը տարա-

ցաւ, բռնեց իր բնական ըն-
 թացքը, հայկական երկու կուռղ
 տարրերն էլ կատաղեցին. եղան
 զոհեր, երկու կողմերից էլ,
 բայց փոքրամթիւ ազատ հոգի եւ
 սիրտ ունեցող տարրը չընկճվեց
 իր աւելի սուտար թուով ստրուկ
 կղերայրների գրոհից։

Ազնուութեան եւ մաքրութեան
 գրոշը գեռ ծածանվում է, եւ
 յոյս կայ որ կը ծածանվի, մին-
 չեւ որ հայութիւնը ամբողջովին
 վերանորոգվի. նոր, մաքուր եւ
 իգէտական տարրը կը յաղթէ
 այն ամէն խոչնդոտներին, որոնց
 յարուցանում են ստրկական կեան-
 քի պայմանները։

Սակայն այդ յաղթանակը ա-
 ւելի ապահովելու, աւելի արա-
 զացնելու համար, հարկաւոր է
 որ հայ մաքուր տարրը, այ-
 սօր անհամեմատ ստուար, քան
 մի տաս տարի առաջ, բարձր-
 վին հրամարվի ստրուկին յա-
 տուկ մտլութիւններէն եւ ախտե-
 րից. լինի մտրով եւ հոգով ա-
 զատ. անկեղծ, շիտակ, ինչպէս
 որ վայել է ստրկացած ժողովուր-
 դին դէպի վերձնութիւն մը-
 ղող գաղտնաբարական առաջնորդ
 կուռղին։ Մի խօսքով մեր գա-
 ղափարական տարրը նախ ինքը
 պէտք է ազատվի մօր կաթի հետ
 ծրծած ստրկական ախտերից, եւ
 ապա յանդգնի ժողովրդին դէպի
 բարձր եւ վսեմ իգէտները մը-
 ղովոր գերը կատարել։ Այդ տար-
 րին պէտք է ոչնչորէ միայն այս
 հաւատը—թէ միայն ապատարտի,
 հոգու եւ մտքի առջեւ է որ խոր-
 տակում է ամէն մի վտանակար
 ահնջ զօրութիւն, որ կարող է
 միշտ խոչնդոտ դառնալ մարդ-
 կային իրաւական յառաջադի-
 մութեան։

ՎԱՐԳՈ

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Տ. Սուրեն, Պուրկազ. — Ասկէջ
 առաջ ծանուցած էինք արդէն թէ
 Պուրկազի մեր ներկայացուցիչն է
 Տ. Յակոբ Փափազեան, որուն կարող
 էք յանձնել ձեր բաժնեկիւնը։
 —Տ. Ա. Նիւ-Եօրք. — Շատ ուշ
 միտցած էք։ Ինչպէս կուզէք որ օ-
 գոստոսի մէջ երեկոյցով գրութեան մը
 պատասխանը գեղեցիկներէ մէջ հրա-
 տարակենք։

—(—)

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Բարից, 15 Նոյեմբեր
 Կարդացի Շարժումի մէջ պարոն Յ.
 Տ. ի յօդուածը։ Չեմ ուզեր զայն ու-
 րակել, այլ պիտի ջանամ գէպերն
 իրենց ճշգրութեամբ զնել ընթերցո-
 ղին աչաց առջեւ, իրեն թողով պէտք
 եղած հետեւութիւնները հանել ա-
 նոնցմէ։

Նախ յօդուածագիրը ակաւայ լնոռ-
 ցած է պատմել թէ ինչո՞ւ եւ ի՞նչ
 պարագանայու մէջ ծնունդ առաւ
 «Ակու մըր»։ Ահա տարիկ։

1898ի մարտի 10ին ուսանողու-
 թեան կողմանէ արուեստաւ երեկոյթ-
 պարահանդէս մը, ուրկից մնաց 4-500
 Քրանքի պարտք մը։ Ուս. Միութեան
 նախկին գիւանդ—սրու մէջ կը գրա-
 նուէին, հակառակ միութեան կանո-
 նադրին բացորոշ մէկ յօդուածին,
 մէկ երկու ոչ ուսանողներ—միջնիւ
 յուշիւ անտարբեր մնացած էր պարտքի
 հատուցման։ Պարտապահանջներն
 կուզէին դատ բանալ ուսանողութեան
 եւ մինչեւ իսկ ն. Բ. Իշխան Լուսին-
 եանի ղէմ, որ ինչպէս ամէն պարա-
 գայի մէջ, երեկոյթ—պարահանդէսի
 կազմակերպութեան առթիւ ալ այն-
 քան օգտակար եղած էր ուսանողու-
 թեան։

Երեկոյթի խնդրէն զատ Մասի-
 նազարանն ալ աննախնայելի վի-
 ճակի մը դատապարտուած էր եւ
 տանտէրը, յատկապէս վարձուց վճար-
 ման համար կսպառնար գոյքերը գրա-
 ւել։

Իրաց այս վիճակին մէջ քանի մը
 ուսանողներ փրկելու համար ուսա-
 նողութեան պատիւը, անցեալ յու-
 լիսի վերջերն ընդհանուր ժողով գու-
 մարեցին ու նախկին գիւանդ հրա-
 ժարած նկատելով, ընտրեցին նոր
 գիւան մը լուրջ ու խոհուն ուսանող-
 ներէ։

Դիւանն իր գործի սկսած վայր-
 կենին իսկ մատենադարանը փակ-
 ուած էր արդէն ու զոյքերն փոխադ-
 րուած Բարիցի Ուսումնասիրած բն-
 կերութեան մէկ սենեակը։ Ահա ին-
 չուս, պարոն Յ. Տ., մէկ երկու երի-
 տասարդներու ապիկարութեամբ, հի-
 մայ սրճարանի մը մէջ ժողովուրդ
 դատապարտուած ենք. բայց վստահ
 եղէք, այս ալ պիտի անցնի։

Դիւանն երեք ամսուան մէջ վճա-
 րեց պարահանդէսին պարտքերն ու
 վերականգնեց Միութիւնն։ Այս ան-
 սպասելի յաջողութեանց նախանձոտ
 այդ մէկ երկու երիտասարդներն ի-
 րենց աննատական նախաձեռնու-
 թեամբ, առանց ուսանողներէ ընտ-
 րուելու, կազմեցին ակու մըր, ան-
 ուանելով զայն «Ակու մըր Հայ Ուսա-

նողաց»։
 Բայց կը հարցնեմ ընթերցողին,
 ինչպէս կարելի է ակու մըր մը տալ
 ուսանողական անունը։

1. Բանէ որ անոր ոչ նախագահն
 եւ ոչ ալ քարտուղարն ուսանողներ
 են։

2. Բանի որ հոս, ֆրանսացիներու
 առջեւ, առանց որական ածականի
 մը՝ union եւ cercle բառերը հայեանիչ
 են եւ չփոթութեանց կարելի էր սեղի
 տալ։

3. Բանի որ վերջապէս «Ակու մըր»
 մէջ կարելի չէ գտնել երեք աւելի
 համալարանի մը կամ բարձրագոյն
 վարժարանի մը գէր երկու յաջորդա-
 կան արձանագրութիւններն ունեցող
 երիտասարդներ։

Միութեան հոկտեմբերի ընդհ. ժո-
 ղովին մէջ որոշուեցաւ խնդրել այդ
 երիտասարդներէն, որպէս զի հաճին
 իրենց Ակու մըր անունէն ջնջել ու-
 սանող բառն զայն անուանելով, օ-
 բինակի համար, Ակու մըր հայ երի-
 տասարդութեան։ Այս արդար պահան-
 ղին մէջ անպատուիչ բան մը կարելի
 չէ գտնել եւ Ուսանողական Միու-
 թեան հաւանութեամբ ու Ակու մըրի
 խուսափողական ընթացքին վրայ,
 գիւանն չըջարեական մը զրկած է
 հայ գաղթականութեան, գէպերն
 պատմելով իրենց ճշգրութեամբ, Հոս
 զարմանալու տեղի չկայ։ Բարիցի
 Ուս. Միութիւնը կապրի ուսանող-
 ներու եւ մանաւանդ գաղթականու-
 թեան նուիրատուութիւններով։ Մի-
 ութեան գիւանն իր շահերուն օգ-
 տակար դատած է ուրիմի զրկել այդ
 շրջաբերականը։

Ինչպէս կը տեսնուի, պարոն Տ. Յ.,
 Միութեան զրկածը պարտաւարի մը
 չէ այլ պարզ շրջաբերական մը, զոր
 կարողաւ առիթն ունեցայ։

Չեր յօդուածին մէջ կըսէք թէ
 «Ակու մըրը գործելու աւելի լայն աս-
 պարեզ մը ընտրած է իրեն, հետա-
 մանելով ի գործ զնել ինչ որ օգտակար
 կրնայ բլլալ բարեգործական հայուն»։
 Եթէ բարեգործական հայ ըսելով կը
 հասկնաք Բարիցի գաղթականութիւ-
 նը, ինչո՞ւ ուրիմի ձեր ակու մըրի
 անպատուութիւն միւն հոկտեմբերի մեր
 ընդհանուր Ուս. ժողովին մէջ յայ-
 տարարեց թէ «մենք թքել ենք գաղ-
 թականութեան երեսին»։ Իսկ եթէ
 ուսանողութիւն կը հասկնաք այն
 ատեն ձեր լայն ասպարեզը կը մտնէ
 մեր Ուս. Միութեան յայտագրին մէջ.
 եւ այդ պարագային ինչո՞ւ նոր Ա-
 կու մըր մը։

Այս կէտը պարզելու վերջ յօդու-
 ձին միւս մասերուն պատասխանելու
 համար շատ կարճ պիտի ըլլամ։

Ըսեմ նախ թէ հոգեւորս Արքեպիս-
 յիլատակը հանդէսով մը աօնելու գա-

զափարն առաջին անգամ յայտնուեցաւ Միութեան Ժողովին մէջ, ի ներկայութեան Ակումբի քանի մը անդամներուն, որք ոչ միայն չզոհացան իւրացնել մեր արևուն դադարը, այլ հոգեհանգստի պաշտօն կատարել ալ ուզեցին Բարիգու Սպարտակոսը անուամբ: Միութեանը նպատակ ունենալով Արտիստի յիշատակը օտնել փոռաւոր հանդէսով մը (հանդէս որ տեղի ունեցաւ նոյն արժաւոր կարգի փայլով) ու յաջողութեամբ խնդրեց մատրան Պատ. Թաղ. Խորհրդէն որ ծանուցման մէջ չըսուի թէ պաշտօնը պիտի կատարուի ուսանողներէն, այլ քանի մը երիտասարդներու կողմէն: Թաղական Խորհրդի ատենապետ Տիար Լաթիֆ (որու ողջամտութեան վրայ տարակոյս չունիք) գոհացում առաւ Միութեան արդար պահանջին, քանի որ մատրան բեմէն ըսուեցաւ թէ հոգեհանգստի պաշտօն պիտի կատարուի քանի մը երիտասարդներու կողմէն և այլն: Ահա Միութեան զերն այս մասին: Միութեան ոչ մէկ անդամին մտքէն անցած է պահանջել որ հոգեհանգստը տեղի չունենայ. այդ տեսակ արտաոտց առաջարկ մը մի' սպասէք Միութեանէն: Տիար Լաթիֆ կրթնայ վկայել այս մասին:

Ինչպէս բաժնեկէս կը տեսնուի, Միութեանը, որու հաւանական էր, երբեք չէ փորձած քայքայել Ակումբը: Սոսա է թէ Միութեան անդամ մը ստունէ տուն կը շրջի Ակումբի դէմ հանրագրութիւն ժողովուրդ: Եւ այս միջոց զայն կործանելու միջոց մը պիտի բլլայ: Եթէ կան ուսանողներ, որք Ակումբի հրաւիրողներն ևս զրկած են նախատայից նամակներով, կամ հայ ճաշարանին մէջ ի տես դրուած Ակումբի հրաւիրողներն պատուած են (դէպքեր որք Ակումբին փողովորդականութիւնը չեն սպառնացաւ):

(*) Բացի անփայլ վերջաբանէն սն չուշտ: Ծ. Խ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ (3)

ՀԱՅԻ ԳԻՆ

ԳԱՂԹԱԿԱՆԻ ԿԵԱՆՔԷ

2.

Հարեմբիքի այդ լեռն ալ կարծես պահանջած էր վայրենի ամբոխին հետ. և իր կողմէն բան մը պակաս չէր թողուր ամբողջացնելու համար շարժարանքը մեր փախստականներուն:

Ան հարուստ բուսականութիւնով մը ծածկուած, ուր փշոտ մացառներն ու թուփերը՝ ոստերուն հետ խոտնուելով ամէն անցք կը խափանէին, անհասնում էլքերով և Էջփերով լեռնէն էր. իր օղին մէջ գցուած սուր ժտերովն ու կողերն սկստող փոսերովը հազարումէկ արգիւքներ, դժուարութեաններ կը հանէր անոնց դէմ:

Բայց կը քաշէին անոնք. կը յառաջանային միշտ, սարսափը իրենց ուժը կրկնապատկած էր. իրենց ներքը դուրսուրած վիշտերը, հոգեկան բուռն ազդեցութիւնները, պահ մը մոռցնել կուտային այս գիշերային ուղեւորութեան սոված ֆիզիքական բոլոր տուայտանքներն ու ցաւերը: Երիտասարդները, որոնց մէջ էր նաև Ասաղիկ, ուսով իրայններն էին

ներ) այս անհասական միջոցակներու առջև պարզ չէ Միութեանը պատահանաւորութիւնը:

Եւ Ակումբին սրտով յաջողութիւն պիտի մաղթէի եթէ չսարակուէի իր անկեղծութեանս հին ազդերնեքով միայն օգտակար բլլալու դիտարողութեան վրայ: Բայց աւագ լաւ համոզուած եմ թէ այդ պարտնները կուտակական ոգով միայն մղուած՝ ձեռնարկեցին Ակումբի կազմութեան. և եթէ բաժնու սխալ է, ինչո՞ւ այդ միջոցն պարտններն, որք ջերմ հոտնով կաշխատին այսօր, երեք ամիս շարունակ, Ռուս նորական Միութեան զիտնի տնօրէնը բլլալով հանդիման, իրենց սխալներով հուսաբերած պարագի մը հասնուցման մասին անտարբեր մնացին և պատճառ էղան Մատենադարանի փակման:

Կը հաճի՞ք պատասխանել այս հարցումիս, պարոն Յ. Տ.:

Ա. Գ.

Թարիք, 25 Հոկտ.

Խաղաղութիւն և անձնասպանութիւն. — Մոտոփոխներու մասին. — 10,000 բոլորի կոտորած

Գարձեալ մի անձնասպանութիւն, և այս անգամ Զէնջանում: Մի Թարիքիցի վաճառական որ երկար տարիներ այդ քաղաքում ապրում էր, ինքնիրան սպանել է Պատճառը վերադրում են իր սրտուն խաղամոլութեան, որը Թարիքում գտնուելով, խաղամոլութեան հետեւանքով 6,000 դրան պարտքի տաք է ընկել: Անձնասպանութեան շարժառիթին ճշմարտութեան վրայ չեմ պնդում, միայն ինչ որ լսել եմ, այն եմ գրում: Սակայն մնում է մի կարեւոր պարագայ, որը ա-

ռիթ համարելով, ուզում եմ մի քանի խօսք ասել:

Ճշմարիտ է որ անձնասպանի որդին խաղամոլութեան հետեւում էր, ճշմարիտ է նաև որ Թարիքու երիտասարդութիւնը (տարիքով, ոչ թէ գործով) մի՞մ մասամբ հետեւում է խաղամոլութեան, գիտնալով թեան և այլն:

Այս մոլութիւններին առաջ բերած աւերումները չեն զղում, մի լաւ բան են համարում, և համարձակ երախաներին ժառանգ են թողնում: Երախան միթէ՞ բարի որինակ է անհեղու, երբ ծնողները նրանց աչքի առաջ խումար են խաղում, արազ և զինի են խմում, և անպատկառ խօսքեր են արտասանում: . . .

Առհասարակ «մոլութիւններ» մասին մի գեղեցիկ և ազդու գառ խօսեց բժիշկ Փաշաեանցը, անցեալ ուրբաթ գիշեր, ամերիկացիների դպրոցի ընդարձակ սրահում. երկու սեռից մեծ բազմութիւն ներկայ էր. հայ և ամերիկացի ինտելիգենտ դասակարգը մեծ և եղ էր յըսուում:

Պ. դասախօսը գիտնական տեսակէտից աչքի առաջ պարզեց մոլութիւնների բարոյական, նիւթական և ֆիզիկական վնասակար հետեւանքները, լեռնանի վկայութիւններով բացատրեց զանազան մոլութիւնների գործած աւերումները, անհատին, ազգին և մարդկութեան նկատմամբ: Աւելի չեչտեց գիտնալու-

թիւնը, խաղամոլութիւնը, կրօնամոլութիւնը, ծխամոլութիւնը և աֆիսիամոլութիւնը:

Ունեղի իրենք լաւ և նպաստաւոր ապաւորութեան տպաւորութեան ներքև մեկնեցան: Այս կարգի հանրօգու դասախօսութիւններ անկասկած ունենալու են իրանց բազմակողմանի արդիւնքները և արդէն Թարիքացիներն համար միակ միութեան բերկոյթներն են:

Ուրախ եմք անտեղի, որ բնիկ Շուշեցի Պ. Թաղէոս Բու միութեանց իրա կենդանութեանը նուիրում է Ռեքաթագի Արամեան դպրոցին 10,000 բոլորի, որի առկուր յատկանալու է իր անունով արգեգիները պահել նայն գայրցում: Եւ իրատուն վախճաք է յայտնել, որ նոյն գրամագլխով մի գիւղ գնուի և նրա արգիւքը յատկանայ դպրոցին, ինչպէս որ արդէն յիշեալ պարտք միևնոյն ձեւով նուէր է արել նաև Թէհրանի գայրցին:

Այս նու իրատուութիւնը Պ. Բու միութեանց խօստացել էր վեհ, Հայրիկին, նրա վերջին ճանապարհորդութեան միջոցում Շուշի հանդիպած ժամանակ, և վեհափառը այժմ պաշտօնակա գրել է Ատրպատականի առաջնորդութեան:

ՄԻՐԱ

—)(—

այս վայրափախն բանակին. ձեռքովին կը ճեղէին թաւ ոստերը ու մացառները, խորերն ի վար կը սահէին և բարձունքներն ի վեր կը մագլցէին:

Սակայն, այս սաժանելի գնացքը շատ երկար չէր կրնար տևել, սարիքոտներ կային, որոնք ամէն վայրկեան կը դանդաղէին ու կիսնային. վիրաւորներ կային, որոնք ալ բուրբոլին արիւնաքամ եղած ևս կը մնային, ու վայրկեանէ վայրկեան պատրաստ էին անուշեղ գետին փրուուելու: Ինչո՞ք քիչ քիչ կը նստարար, իրարմէ կը հեռանային, ուստի բուրբոլին զիրար չը կորսնցնելու համար, քիչ մը օդի տանելու համար անհրաժեշտ էր զազար մը: Մանաւանդ որ արեւելքն ալ կը կսէր շառագունել, ծիրանի գիծ մը հորիզոնին եզերքը կերկնար. աղօթարանը կը բացուէր. լոյսը վախ կազդէր իրենց, եթէ հետապնդողներ կային կրնային գիշերք գանել, ուստի յառաջապահները ձորի մը մէջ կեցան:

Քիչ քիչ ամենքն ալ եկան, հաւաքուեցան հոն և պո բակներու մէջ տեղաւորուեցան:

Է.

Արեւը բարձրացաւ հորիզոնէն վեր իր ոսկի գնակները լեռանը կողերն ի վար ցանցնելով, քաղցրաշունչ հով մը ստառուան ատ պահուն սկսաւ թաւ-

ոստերու հետ խաղալ. և հազարաւոր թռչուններ ամբողջ լեռը լեցնուցին իրենց երգերով:

Բնութեան մէջ ամէն բան իր սովորական կեանքը կը վերսկսէր. առջի օրուան պէս զուարթ և աչխոյժ, բան մը չէր փոխուած հոն: Միայն մեր տարաբախտներու կեանքն էր որ իր սովորական ճանքէն չեղած էր. ու միայն անոնց հանդիստն էր որ առ յաւէտ թուաւորուած էր, ուստի, արեւուն առ պաշտօնութիւնը, առտուան աղւորութիւնը, հովին պղտանքը ու թռչնիկներու խմբերը, տարօրինակ է աւելի զարհուրելի կերպերով իրենց:

Ինչ, միթէ արեւը չի պիտի սարսրար. խաւարին մէջ գործուած անլուր վայրագութիւնները լոյսին պարզելով, միթէ հովը չի պիտի սառնէր այդ արիւնտ վայրերէն անցած պահուն, ու թռչնիկները սարսափ պէս բան մը պղտան չէին իրենց արձակած հեծկտանքներէն ու սղիտորում ազդակներէն:

Այդ ինչ օրէնք էր, որ թող կուտար, որ ազդին մարդկային բաղմաթիւ կեանքը վայրկեանի մը մէջ զոհ երթան վայրագ կիրքերու, ու երկարատեւ աշխատութեանց արգիւքներ մէկանց ոչնչանան, մոխիր կարին, մինչդեռ անդին, անոնց վրան ու շոքըք արեւը անտարբեր թափէ իր հրալուս շողերը. հովը իր փայփայանքը շարունակէ և թռչնիկներն ալ իրենց զուարթ

դալայնները վերսկսին:

Չէ, իրենք կը կառնէին որ այդ առտուն արեւը սեւ պիտի ծագէր. հովը պիտի կենար, թռչնիկները պիտի համբռնային և քարերը ճաթէին:

Այս ախուր խորհրդածութիւններուն մէջ քիչ քիչ իրենց վճիռ հաւատքն էր որ կը պղծուէր. և անոնց կոյս հոգիին մէջ ամբողջով փոշիներ կը մագլցէին:

Եւ այդ միութեանի քան մը չի բերել զատ քո անմիթեալ ամբոխն, ալ աւելի կը բազմապատկէր անոնց, ստառապանքը, իրենց առջև պարզելով բուն իրականութիւնն իր բոլոր մերկութիւնովը:

Որչափ քիչեր կրցեր էին փախել և որչափ շատեր հոն գիւղը մնացեր և գոհ գացեր էին սուրբն ու կրակին, և այդ ազատագրողներն ալ որչափ խեղճ դրութեան մէջ էին, և զիս ինչ վստանդներով պայտարում:

Ահա ուրիշ եղեկիւններ ալ, որոնք բարձունքներէն վար կը թափին, ծառերուն հետեւն զուրս կեցին, կծկուած ամբոխը սարսափահար ոտքի կեցւել, կը կարծեն թէ խուժանը հասած է: Բայց չէ, ասոնք ալ իրենց պէս թշուառ փախստականներ են, ուրիշ գիւղերու մնացորդներ:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

(Շարունակելի)

Իբր անկախ և անկողմնակալ թերթ, ի ստորեւ կը հրատարակենք Տօթթ. Աղեք. Աղաբեկեանցի հետեւեալ նամակը:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱՅՐՈՒԹԵԱՆ

Խնդրեմ Շարժումի մէջ դեռեղև հետեւեալ նամակը որը ուղարկուած է Ռիզակցիոնին:

Բիզակցիոնի 642 թ.ի մէջ Պուլկարական բրոնիկ վերնագրով յօդուածում ինձ բոլորովին անձանօթ ձեր թղթակիցը, ի միջի այլոց, չը գիտեմ ինչ գիտաւորութեամբ, իմ անունս գործիք է դարձնում անգիտ միւս հայ բժիշկներին անպատեւելու: Այդ պեղ վարձուքի արասաւորող սուտեքից բարձրին գերծ մտաւ համար, խնդրեմ եմ հրատարակել այս նամակս Ձեր ամենամօտ համարներին մէջում:

Յայտարարում եմ, որ ո՛չ մի առիթ կը ո՛չ մի փաստ չեմ ունեցել յարգանքս դէմսուրու հայ արհեստակիցներէ:

Յայտարարում եմ եւ այն, որ այդ սեսակ թղթակիցներէ թէ գոհաւոր եւ թէ պարսաւանք ինձ համար բոլորովին արհամարհելի են:

Բժ. Աղեք. Աղաբեկեանց

ՀԱՅՎԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Թուրք կառավարութեան բըռնած անզգամ դիրքը բարենորոգումներու անհրաժեշտ և ստիպողական դարձած պէտքին առջեւ, ինչպէս նաև նոյն կառավարութեան ցուցուցած վայրագ տրամադրութիւնները երկիրը կառավարելու նոյն «կտրեմ», շարժեմ, կողոպտեմ, սարսափեցնեմ»ի աւանդական դրութեամբ, բողոքել կուսան ոչ միայն անաչառ և մարդասէր միտքերու, այլ և նոյն իսկ այն օսկաններուն որոնք սկիզբէն ի վեր թրքասէր եղած և այնպէս մնացած են: Այս վերջի դասակարգէն է Բէշտէր կոյտ թերթը որուն Պոլսոյ թղթակցին վերջին յօդուածը մեծ իրարանցում առաջ բերած է Պոլսոյ կառավարական շրջանակներու մէջ, ոչ միայն սրբահետեւ թրքահաճոյ ուղղութիւն մը չի ցուցներ, այլ և մանաւանդ սրով հետեւ ուղղակի «Հայկական խնդրին» մօտալուտ վերաբացումը կը ծանուցանէ:

Հայկական խնդիրը, կըսէ թղթակիցը, բարեբախտաբար օրակարգին մէջ չէ. բայց եթէ իրերը իրենց հիմնական ընթացքին շարունակեն, կը ցատկէր ըսելու թէ դիւանագիտութիւնը և մամուլը «լրջօրէն» պիտի զբաղին այս խնդրով:

Հայաստանի Ռուսիոյ սահմանակից նահանգներուն վիճակը բըռնալ գոհացուցիչ չէ և զեսպան Պ. Ջինովիէվ միշտ ստիպուած է Բ. Իրան ու շաղրութիւնը հրաւիրել այն անխիղճ անախտութեան վրայ որ կը տիրէ Վանայ, Պիթլիսի, և ուրիշ նահանգներու մէջ:

Կովկաս սպասանող հայ գաղթականներուն վերադարձը միայն

տեսակաւորէն լուծուած է և շատ հաւանական է որ իրականանան ասոս դիւանագէտի մը Պոլսոյ մէջ պրոտաստանած սա խօսք թէ «պիտի վերադառնանք հայկական խնդրին»:

Ասկէց զատ ա ցաւալի պարագան ալ կայ թէ՛ հայոց պատրիարքին՝ թէ՛ պալատան և թէ՛ արդարութեան նախարարին ըրած բոլոր դիմումները միշտ անպատու դնացած են, նոյն իսկ ամենէն կենսական և անհրաժեշտ կէտերուն մէջ: Թէև պատրիարքը առատ խոստումներ ընդունած է, բայց անոնք երբեք չեն գործադրուած: Ոչ ոք կրնայ առարկել թէ Հայերը գանգատելու իրաւունք չունին և թէ պարտաւոր չեն գոհ մնալ իրենց արդի վիճակէն: Ասիկայ բացարձակ պտութիւն մը պիտի ըլլար, քանի որ հայերը գոհացում չեն գըտած նոյն իսկ իրենց ամենէն տարրական պահանջումներուն մէջ: Օրինակ մը տանք. Անատոլի մէջ հազարաւոր հայեր, խրատութեանց սրահուն իրենց բոլոր գոյքերէն կողոպտուեցան թորքերու և քիւրտերու ձեռքով, և մինչև այսօր պատրիարքանք փոքրագոյն փոխարինութիւնը չէ կրցած ձեռք բերել այս մարդերուն համար, որոնք գուրս վաճառուեցան իրենց տուներէն և հողէն: Ահաւասիկ անվիճելի անիրաւութիւն մը զոր Դուռը պարտաւոր է դարձանել գէթ մասամբ, և այս՝ բուն իսկ իր շահերը աչքի առաջ ունենալով, քանի որ հայ յեղափոխական Կօմիտէին համբերութիւնը իր ծայրը հասած է:

Ստիպողական է ուրեմն որ թուրք կառավարութիւնը որոշում տայ ընդունելու հայոց պատրիարքարանին մէկէ աւելի անգամներ կրկնած խնդրանքները, նկատելով որ այս խնդրանքներուն և ո՛չ մէկը արդար պահանջք մը սահմաններէն անցին չանցնիր: Սուլթանին խորհրդականները, որոնք միշտ գէթ կը գործեն, թող գիտնան թէ թուրքիոյ ճշմարիտ շահերուն համեմատ չեն աշխատիր:

Հայոց պատրիարքարանին շափաւոր պահանջումներուն երեսի վրայ թողութիւն շատ սուղի պիտի նստի թուրքիոյ, ինչպէս արդէն ապագան պիտի ցուցնէ:

ՍՍԱԿԵՐՈՂԱԿԱՆ ԽՆԴԻՐ

Կ. Պոլսէն կը գրեն Վիէննաի Քոնէստանտին Բողոքի կէսպաշտօնական լրագրին:

Ոչ տեղի կառավարական շրջանակները մտատանջութեան մէջ են Մակեթոնիոյ խնդրին համար. և այս մտատանջութիւնը հասկնալի է Պէտանաի գէպքերուն, Մակեթոնիոյ վրայ Պուլկարիոյ ունեցած տենջանքներուն և Քոստանտինոպոլիսի արգի պղտոր դրութեան առջեւ: Յայտարարութիւնը կը պահանջէ: Արդ, այդ Յօդուածը կրէտէի համար, 1868ի կազմական Կանոնագրին գործադրութիւնը կը խնդրէ. մինչդեռ կը զիջին վերջին ծանօթ կարգադրութիւնը շատ աւելի հեռու կերթայ և հետեւաբար կարծես Յօդուածը ամբողջապէս կը խափանէ, ինչ որ սակայն արգելք մը չի կրնար ըլլալ կրնար ըլլալ «նոնց» որ Մակեթոնիոյ մէջ ապստամբութիւն մը բարձրացնել կուզեն:

Հարկաւ այս բոլոր նկատումները կը լռելի է ետքն է որ Բ. Դուռը սկսաւ բարենորոգումներու ճրագի մը յօրինել: Թուրքիոյ եւրոպական գաւառներու համար, որպէս զի այս կերպով առաջին առնէ բարենորոգումներու այն խնդրանքներուն որոնք կրնային ուրիշ կողմէ ծագիլ: Այս տեղի գիւնագիտական շրջանակներն ալ մտադրազ են մակեթոնական խնդրին վերաբարձման պատահականութիւնով: Անուրանալի կասկած մը կ'իջի, պալատան մը այս կամ այն պետութեանց մը տարրութիւններուն վրայ, մինչդեռ թուրքիոյ կողմէ առաջ գալիք գրգռութեան մը երկիրը գոյութիւն չունի: Սակայն եթէ ո և է կողմէ մը խոտովութիւններ յարուցուին Մակեթոնիոյ մէջ, դժուար է նախագուշակել թէ ամբոխներուն կիրքերը մինչև որ աստիճան կրնան բորբոքիլ, քանի որ մտրները չեն որ կը պակսին այդ նահանգին մէջ:

ՀԱՄԱԳՊԵՏԻՆ ՊԱՐԱՀԱՆԴԵՍ

Տեղուոյ երկտասարդաց նախաձեռնութեամբ, ինչպստ Ազգ. Պարտուց բարձման, համազգային ընտանեկան պարահանգէս մը պիտի տրուի հոգաբարձութեան հովանաւորութեան ներքեւ, յառաջիկայ Դեկտ. 19ին. և նոյն պարահանգէսին մէջ տեղի պիտի ունենայ ասկէ երկու տարի առաջ, նախկին տիկնանց՝ Հայրհետեւ Դպրոցասէր Բնկերութեան հրապարակ հանած տամբերուն վիճակահանութիւնը հետեւեալ կարգադրութեամբ:

Ա. Ով որ նոյն ընկերութեան տոմսակ ունի, պիտի կրնայ առանց բան մը վճարելու, իր տոմսը ներկայացնելով վիճակահանութեան կարգադրութեան խմբին՝ թիւ մը քաշել ու անպատճառ նուէր մը շահիլ:

Բ. Ով որ չունի այն տոմսերէն ու կուզէ վիճակահանութեան մասնակցիլ, պիտի վըճարէ մէկ ֆրանք և նոյնպէս թիւ մը պիտի քաշէ շահելի:

Գ. Ով որ ունի նոյն ընկերու

թեան վիճակահանութեան տոմսերէն ու չը պիտի կրնայ պարահանգէսին ներկայ գտնուիլ, թող հաճի իր տոմսակները յանձնել ուրիշի մը, որ իրեն հաշույն մասնակցի վիճակահանութեան: Ուրեմն հարկ չը կայ ըսելու թէ վերոյիշեալ պարահանգէսի մէջ վիճակահանութիւնը կատարուելն վերջը Հայրհետեւ դպրոցասէր ընկերութեան տոմսակները անարժէք կը մնան և անկէ վերջը մէկը բան մը չի կրնար պահանջել:

Ի դիմաց Հոգաբարձութեան Ատենադպիր Ատենապետ Գ. Կիլպիսեան Թ. Մ. Թովմասեան Վառնա 1 Դեկտ. 1898

ՔՐՈՆԻԿ

Թիֆլիսէ կը ծանուցանեն թէ Կաթողիկոսը որոշեր է կայսերական հրամանին հակառակ պայմաններու մէջ գրաւուած ազգային կալուածներուն համար, դատ բանալ, ընդդէմ Կովկասի կրթական վերատեսուչ Պ. Սանովսկիի, որուն հրամանները գործադրած են տեղային կրթական տեսուչները:

—Նմանապէս, Թիֆլիսի Յովնանեանք՝ նոյն վերատեսուչին գէթ դատ բացեր են Յովնանեան աշականց վարժարանին մեծ քարավանդայր գրաւելուն և հանրային սովորական դպրոցի վերածելուն համար:

—Իստերու այս շարքը առայժմ կը փակէ Պագուի Մարգարիտական ընկերութիւնը, իր 250 հազար ռուպլի արժէքով կալուածին գրաւման համար:

Նախարարաց խորհուրդը որոշեր է որ այս և այս կարգի գատերը քննուին:

—Կարինէն Ալաշկերտ գացող կարավան մը ճամբան կողոպտուեր է քիւրտ աւաղակներու ձեռքով:

—Վառնաի մէջ կառուցուելիք թատրոնին համար, յատակաքիծերու միջազգային մրցում մը բացուած էր: Ուրախ ենք տեսնելով թէ շահողներէն մէկը Տ. Լեւոն Կիւրեղեանն է, ճարտարպետ հռոմի դպրոցէն:

—Վանայ կաթողիկէ բազերաները ընդարձակ այգի մը և չէնք մը գներ են, զոր Բրորական սահմանութեանց կեդրոնի մը պիտի վերածեն:

—Վանայ հնախոյզ գերման գիտնականները քաջալերուած հետզհետէ երեւան ելած հնութիւններէն, իրենց գործաւորներուն թիւը հարիւրի բարձրացուցեր են:

—Անցիալ շաբաթ օր Սօֆիայի մէջ տեղի ունեցաւ պուլկարական շաքարի անգրանիկ գործականին բացումը: Դերկայ էին իշխանը և նախարարները:

—Պուլկար կառավարութիւնը

59 տարուան պայմանաժամով իր վրայ առած է Արևելեան երկաթուղեաց այն գիծերը որոնք պուլկար հողի վրայ կը գտնուին: Այս գծերուն երկարութիւնն է 302 ու կէս քիլոմետր: Կառավարութիւնը 24 ու կէս միլիոն ֆրանքի փոխարինութիւն մը պիտի ընէ երկաթուղեաց ընկերութեան:

Ռուսական թերթ մը կը գրէ թէ Բաղեշի մէջ հայերը ազգեցիկ շէյխի մը որդին սպաննել են: Այդ պատճառով քրդերու և հայերու մէջ կոխ մը ծագեր է որուն մէջ 60ի չափ հայեր մեռեր ու վերաբերուել են:

—Սուլթանը առաջին կարգի Օսմանիէ պատուանշան տուել է Բ. Գրան իրաւագէտ-խորհրդական Դարբիէլ էֆ. Կորատունկեանին:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՊԲԵՐ

ՍՊԱՆՍՈՒ ԵՒ ԱՄԵՐԻԿԱ

Ֆարիդի հաշուութեան յանձնաժողովը իր աշխատութիւնները տարածած է, ի հարկէ, բոլորովին ամերիկացաց նպատակներով: Կոնգրէսը 14 յոգնաձեռք կը բաղկանայ, բայց Գուստի պարտուց և Քարոլինեան կղզեաց գնման խօսքը բնաւ չընել: Միայն Ֆիլիպպիններու ամերիկացաց թողութիւնը կը ճշդէ և վեցամսեայ պայմանաժամ մը կը շնորհէ՝ դաշնագրին երկու ազգերուն խորհրդարաններու կողմէն զատեալ քայլման համար:

Յետոյ, գործը քիչ մը թատերահան ձեւ մը կառնէ: Սպանիացի պատուիրակները յանկարծ իրանի կը բողբեն Մաք Քինլիի հրովատակին նախատինքներուն և ազգերու յիմանց բռնաբարման դէմ նրոնք զոհ գացած է Սպանիան: Միջանկեան պատուիրակները ալ առելի կը կատարեն երբ զանազան քննարկները, իրենց համբարձուր պաշտօններն թեմաք երկրորդ անգամ ըլլալով կը մերժեն միջազգային յանձնաժողովի մը ֆրանսաբարութեան ենթարկել Մէյնը զբաժանորին ընկզման խընդիւր:

Սպանիոյ կառավարութիւնը խելացի անօրինութիւն մը ըլլած է իր Գաղթային նախարարութիւնը շնչելով, և ազգաբնակչութեանը որ իր գաղթային երբեմնի ահադին կայսրութեանն ոչինչ մնացած է իր ձեռքը: Պելժիոյ ձեռքնի թաղաւորն ալ, կարծես ստացուածքի վերջին բեկորն ալ խլել ուղիւով Սպանիան, 25 միլիոն ֆրանք նուիրել է Գանարեան կղզիները գնելու համար:

—Բուպահ պատմաբան Գալիքսթո կարօտա որ Ուաշինկթոնի գացած էր ամերիկեան կառավարութեան հետ բանակցելու, մեռեր է թոքաապէ:

ԱՆԳՂԻՂ ԵՒ ՖՐԱՆՍԱ

Այս երկու մեծ պետութիւնները

ուն յարաբերութիւնները, փաշտախ ինքրին կարգադրութեամբ հազիւ քիչ մը, գէթ երեսանց բարեօքած՝ և հա՛ս Սըր Մօնսըն, Բարիզի անգլիական դեսպանը, նոյն քաղաքին անգլիական Առեւտրական Սենեկին հիմնարկութեան տարեգարծի խնճոյքը յարմար առիթ սեպելով, կծու ատենախօսութեամբ մը, շատ մը զրգուիչ ակնարկներ կընէ Ֆրանսիոյ կառավարութեան և անոր գաղթային գործառնութեան նկատմամբ: Այս բանախօսութիւնը, որ ապշեցուցիչ է նա մանաւանդ երկու պետութիւններուն յարաբերութիւնները ամբապնդելու պաշտօն ունեցող դեսպանի մը բերնին մէջ, մեծ իրարանցում յառաջ բերած է գիւտնագիտական աշխարհին մէջ: Խնդիրը առելի լուրջ հանդամանք մը կընայ ստանալ, և թէ երբեք հաստատուի թէ Սըր Մօնսընի այս անխորհուրդ բանախօսութիւնը առելի բարձր տեղերէ ներշնչուած էր:

ԽՍՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Երկուրէլ մէջ այս պահուս պատերազմական բարձրագոյն խորհուրդը նիստ նիստի վրայ կը գումարէ, Մակեթոնիոյ և Ելմէնի մէջ ռազմագիտական նոր կարգադրութիւններ ծրագրելու համար: Վանայ զօրաբանակին վերայ ևս յաւելումներ պիտի ըլլան և այս լուրը արդէն հրատարակուած է թուրք լրագրաց մէջ:

—Գերման կառավարութիւնը վերջին շատ մը անտրիակական հպատակներ արտաբանած էր իր հողէն: Այս պատճառաւ անտրիակական խորհրդարանին մէջ տեղի ունեցած հարցապնդումները շատ նեղը ձգած են թուն կոմսը, որ չէ գիտցած ինչ պատասխանել զաշնակցի մը բռնած այս կոպիտ վարմունքին առջեւ:

—Բարիզի վճռաբեկ ատենին որոշումով գնդապետ Քիգարի պատերազմական ատենին կողմէ զատուելու թուականը յետաձգուած է:

—Երեկ գիշեր մամը ծին, քաղաքին տներէն մէկուն մէջ, նոր շրջանաւարտ պուլկար սպայ մը չարաչար ձեծելով վիրաւորեցին:

Պատճառը՝ «չէռչէ լա ֆամ»:

Կ Ր Է Տ Է

Երկրիտ իշխանը այսօր վաղը Սուտա կը սպասուի, թրքաց ճիւղաներէն խլուած այդ կղզին կառավարելու: Բայց ճիւղը գեոյտաստած չեղեալ և տոնն ատեն որքան անհիթեթ այնքան ալ ծաղրելի ծանուցադրով մը կիմացնէ թէ ինք՝ Գուռը, նկատի առած է այն սպանդանութիւնները զորս տուած են պետութիւնները՝ Սուլթանին գերիշխանական իրաւունքները պահպանելու կղզիին մէջ, ըսել ուզելով

որ իբր թէ հակառակ պարագայի մէջ, եթէ այդ սպանդանութիւնները չի յարգուին, տակնուվրայ պիտի ընէ եւրոպական կարգադրութիւնները:

Միւս կողմէ Գուռը մաքեալէլեան միջոցներու կը գիմէ կրէտէի հանդիսար պղտորելու: Այսպէս, իր գործադրութեան ձեռքով, կրէտէի իսլամները դրգած է հանրագրով մը անգլիական կառավարութեան գիմել, անոր պաշտպանութիւնը խնդրելու: Անգլիական կառավարութիւնը յոյժ վայրացած է թրքերու այս ըրթացքէն. և անգլիական հրապատար մերժած է խնդրագիրը ընդունելու:

ՌԻԱՒՈՒՆՔԻՆ

Այսօրուան «Իրաւունք»-ին մէջ, լրագրիտ նախկին լամբագիր Շաւարշի գէմ այնպիսի յարձակում մը կը բեւայ, որ երեխայի մը անտեղի յարձակման տպաւորութիւնը կը թողու ընթերցողին վրայ:

«Իրաւունք» կը հաւատէ թէ «Իրաւունք»-ի թղթակից Գաղթականը, «Շարժումի խեղճուկ Շաւարշն է և նոյն անձը որ երբեմն Ե. Գաղթական կամ միայն Ե. կըստորագրէր»:

Մեզ չը հետաքրքրեր այն կէտը թէ Շաւարշը և «Իրաւունք»-ին Գաղթականը մի և նոյն անձն է թէ չէ. միայն կը յիշեցնենք «Իրաւունք»-ի թէ նոյն Շաւարշն է (Ե.) որ «Իրաւունք»-ը վարած է ամբողջ տարի մը և իր արուեստը քիչ շատ սորվեցուցած անոր խմբագիրներուն՝ ի հարկէ՝ այս վերջիններուն արուեստը իւրացնելու ընդունակութեան չափով: Շաւարշի օրով և անկէց առաջ հրատարակուած «Իրաւունք»-ի համարները բազմաթիւ կարելի է համոզուել այս բանին, որ արդէն ոչ մէկու համար զազանիք չէ:

Գոնէ երախտապարտ ալ չէք ձեր վարպետին:

Իրիճաղելի է նաև որ «Իրաւունք» յարձակելով Շաւարշի վրայ, իր մանկական տրամաբանութեամբ կուզէ «Շարժում» նալ հարուածել:

Ձ Ե Կ ՈՒ Յ 8

Տիկնանց Ընթերցարան Վառնայի Ամէն օր աղան է Գշ և Կիր. օրերը, ժամը 1-5 զրքեր ստանալ, 8 օրէն անվթար վիճակի մէջ ետ բերելու պայմանով: Այս պայմանաժամը անցնողները նախ 5, և յետոյ 50 սանթիմ սուղանք կը վճարեն ու շացման ամէն մէկ օրուան համար: Եւ օրերը. նոյն ժամերուն արկիւնները եւ օրերուն արտօնուած են նոյն խի ընթերցարանի մէջ կարգալ, և զազափարի փոխանակութիւններ ընել:

Թերթերը դուրս չեն արուիր: Ընթերցարանը բաժանորդագրութիւն և նորիքատու թիւներ կընդունի մատենադարանին՝ ճօխացման փափաքող անձերէն:

Պ Օ Ր Ս Ա

Վառնա 1 Դեկտեմբեր

ՊՈՒՂՏԱՅ

Վառն, լիպրա 55-58, հէքթօյ. 9.20-10 ֆրանք
Արապա, լիպրա 55-60 հէքթօյ. 9-12 ֆրանք

ԱՐՐԱ

Լիպրա 42-50 հէքթօյ. 5.80-6.20 ֆրանք

ՄԻՍԻՐ

Վառն, 55-57 լիպրա, 5.70-5.80
Առապա, 55-60 լիպրա, 6-6.10
Կիւնիէ 15-20 վառն, 25-30 առապա կէլմէքտէ արի:

ԵՌԻԱՍՅ

Կիւնիէ 4-5 արապա կէլմէքտէ արի. 4.60-5 ֆրանք

ՏԱՐՐ

Կիւնիէ 5-6 արապա կէլմէքտէ արի. 5.80-6.00 ֆրանք

ՖԱՍՈՒԼԵՍ

Կիւնիէ 8-10 առապա կէլմէքտէ արի 100 օգաւը 18-22 ֆր. մալա կէլմէքտէ Առապա մուսուլէսի Կարօլին 21 ֆրանք Կիւնիէ արի արի 8-10 վառն, 50-60 արապա կէլմէքտէ արի 10-15 արապա արապա կէլմէքտէ արի:

Տ Պ Ա Ր Ա Ն

ԱՐԵՒԵԼԵԱՆ

Օ. ԲԱՐՍԵՂԵԱՆԻ

Վ.Ս.Ն.Ս.

Երկրայ քաղ. Երկրայ քաղ. Սազալը Զեւելի կից.

Կը տպագրուին հայերէն, պուլկարերէն, զաղթերէն, յունարէն, տաճկերէն, և այլ լեզուներով այցնտուն. հոստումն հարստեկան Տրաւարալի, ազգաբարձի ինչ, նամակագրութիւն, պահարան, մահազգ. վաճառականական ամէն տեսակ գործեր, գիրք. լրագր. և այլն:

Գուճառ և ուկեզոճ գարնազոճերու համար ամէն լեզուէ նոյն տեսէ եւ մասնաւոր գործիքներ կը գտնուին:

ՄԵԾ ԽՆԱՍԻ ԵՒ ՄԱՐՐՈՒԹԻՒՆ
Գիւնիէ 8080 Գիւնիէ ՄԱՐՐՈՒԹԻՒՆ
Որքէն և այլն: Եւ իւրաքանչիւր իւր հարկէն և իւրաքանչիւր:

ՎԱՐՊՈ

ԵՐԿՈՒ ՍԷՐ

(ՀԱՅ ԹԵՂԱՓՈՒՆԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՆ)

Միայն սպանդան և օրինակներ կը ծախուին Վառնայի մէջ Շարժումի խմբագրատունը, Ֆիլիպպէ Տ. Անան Կոչի մօտ, Ռուսոյք շայկ Մալախեանի սրճարանը, Սօֆիա Տ. Մուշկ Արժրուտի քով:

Մտերքս Վամուլին կը յանձնուի նոյն հեղինակին «Բնութեան գոհերը»:

«Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ»

Վառնայի մէջ կը վաճառուի Մուսալա, թանկ կէլմէքտէ արի խանութը, և Ապալիւրրանման մզկիթին գէմը հայկական գրատունը Ա. Ջարպանէլեանի քով:

Օտգօրնիք: Ա. ՏՄԿԱՍՕՎԵ

Սեպտիցա Գ Վառնայի Երկրայ